ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՌՅԱԿՆԵՐԸ

Խ. Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունը այնքան ինքնատիպ է, որ այն, միանգամայն իրավաց կերպով, սովոր ենք անվանել «Թումանյանական»։

Տասնութ տարեկան հասակում գրած «Հին օրհնությունը», որը իր մոնումենտալությամբ կարծես ժայռաբեկորի վրա փորագրած երկաթագիր արձանագրություն լինի, սերնդից սերունդ համառորեն անցնող կյանքը վերափոխելու իր մռայլ հորդորով հենց կյանքի անառարկելի հաստատումն է։ Հետագայում, 90-ական թվականներին, գրելով բանաստեղծություններ, որոնք երգում են հին հուշեր և տխուր արցունքներ («Մի որոնիր»), խորտակված հոգի և հուր հառաչանք («Ինձ մի խնդրիր»), անքուն գիշեր և սև օրեր («Երկար գիշերներ»), շիրիմի շուրջը բուսած վարդ («Եթե մի օր...»),— բոլոր այս մոտիվներն իրենց ավարտված արտահայտությունն են գտել «Դեպի անհունը» պոեմում,— բանաստեղծը միաժամանակ գրում է գործեր, որոնց մեջ նորից երևում են կենսահաստատ տրամադրությունները։ «Ամառվա գիշերը գյուղում» բանաստեղծության մեջ Թումանյանը երգում է լուսնկա գիշերը, պայծառ երկինքը, վառ ցոլցլացող աստղերը, «Աստղերի հետ» բանաստեղծության մեջ՝ բնության հավերժությունը, «Համերգում»՝ լեռնային վտակի զվարթ համերգը, «Իմ սերը» ոտանավորում երգում է սիրո երջանկությունը, «Անդարձ ճամփորդներում» առկայծում է հավատ, որ անապատ դարձած հովիտը նորից կծաղկի։

Սակայն Թումանյանի լիրիկայում աշխարհի կենսահաստատ ընկալումը ուժեղ և ծավալուն արտահայտություն է գտել 900-ական ու առավել ևս 10-ական թվականներին։ Հենց այս ժամանակաշրջանում է նա գրել իր քառյակները ու մի շարք այլ փայլուն լիրիկական գործեր, որոնք և հանդիսանում են սույն հոդվածի թեման։ Հոդվածում, բնականորեն, այս կամ այն հարցի քննարկման ընթացքում անհրաժեշտ դեպքում ներգրավվելու են նաև մեծ բանաստեղծի այլ ժանրերի գործերը։

I

Մետեխի բանտում, 1909 թվականի փետրվարի 20-ին Թումանյանը գրեց ամբողջովին խնդությամբ ողողված իր հայտնի «Վայրէջք» բանաստեղծությունը, որով կարծես դռներ բացվեցին քառյակների համար։

Հոգու անսահման ազատության մի մանիֆեստ էր դա, որ բանաստեղծը արգելարանի մութ նկուղից ուղարկում էր լույս աշխարհ։

Լրացել էր բանաստեղծի քառասուն տարին ու նա հին հույների պես հենց այդ տարիքը համարելով մարդու հոգեկան ուժերի զարգացման բարձրակետ՝

հաշիվ է տալիս անցածի մասին, ամփոփում իր մեծ փորձը և ապագա կյանքի ուղիները նշում։

Բանաստեղծը մերժում է քենն ու նախանձը, զանձն ու փառքը, բեռնաթափվում այն ամենից, ինչ փոքրացնում ու ճնշում է հոգին ու այդ ամենը թողնելով ներքևում, բարձրանում է լեռան կատարը մեծարելու համար այն, ինչ թռիչք է տալիս ոգուն, ինչ մեծ է ու վեհ, ինչ ծնում է երգ ու տաղ, զվարթ է ու անհոգ։ Ազատ, լայնածավալ աշխարհը հակադրվում է անձուկ, իր մեջ ամփոփված ու ճահճացած եսին։ Բանաստեղծը ամենայն իրավամբ անվանում է իրեն իմաստուն։

«Վայրէջքը» իսկապես վայրէջք չէ,— նա վայրէջք է ֆիզիկական իմաստով,— այլ վերելք, ահարկու ճանապարհներով իսկական վերելք դեպի սուրբ անհայտը՝

Բռնում եմ ես վեր—
Դեպի Անհայտը սուրբ, աշխարհքը պայծառ[1]։

Անհայտը սուրբ լինելով, դրանով արդեն մասամբ դադարում է անհայտ լինել, բացահայտում է իրեն և առավել բացահայտվում, դրվելով անմիջապես «պայծառ աշխարհի» կողքին, իբրև վերջինիս հավասարազոր։

Քառյակներում, որ «Վայրէջքի» աշխարհազգացման հետագա զարգացումն են, բացահայտումն ու ծավալումը, հավերժականը, իհարկե, մնում է հաստատ և աներեր, բայց բնավ լուռ չէ և անշարժ, այլ ընդհակառակը, լի է կյանքով, աղմուկով, իրարանցումով։

Ով անճառ մին, որ ամենքին միացնում ես մի կյանքում

Ահա Թումանյանի քառյակներից մեկի (ԼԶ) առաջին տողը։ Այստեղ խոսքը լոկ կյանքի մասին է։ Մահը աքսորված է, անճառ մինը ոչ թե քայքայում է, այլ միացնում է, կապում, զոդում, իմաստավորում։

Ահա նույն քառյակի երկրորդ տողը.

Ամեն կյանքում ու երակում անտես, անկեզ բորբոքում

Խոսքը նորից կյանքի մասին է, երակի մասին, որ կյանքին հյութ է մատակարարում. ամեն ինչ եռուզեռի մեջ է։

Ողջ ազատ են ու հաբազատ ես աշխարհքում Քեզանով

Ազատությունն է այս աշխարհում տիրում և ոչ թե մահվան անհրաժեշտությունը։

Ողջը Քո մեջ՝ անմահ, անվերջ՝ Քեզ են երգում Քո ձենով

Կյանքում էլ, այո, տիրողը անմահությունն է ու անվախճանությունը, բայց ոչ թե լուռ, ամայի, ընդարմացած, այլ երգով ու փառաբանությամբ լի անվախճանությունը։

Մի այլ քառյակում (ԼԹ) Թումանյանը հավերժությունը կենդանի աստված է անվանում, որի շունչը նա ամենուր զգում է, որի անլուռ, անդադրում «կանչն ու հունչը» նա ամենուր լսում է։ Տիեզերքը համակված է մի խոր մեղեդիով,

[1] Հովհաննես Թումանյան, Գեղարվեստական երկեր, Երևան, 1934, էջ 94։ Հետագայում քաղվածքների էջերը տրվելու են ընդգրում. քառյակ մեջ բերելու դեպքում տրվելու է նրա համարը։

հմայիչ մրմունջով, և բանաստեղծի ամենալուր հոգին առավել վեհացնում է այդ մեղեդին ու մրմունջը։ Թումանյանը խորապես զգում է իր միասնությունը համապարփակ կյանքի, տիեզերքի հետ։

Միասնության այդ զգացողությունը ավելի ու ավելի խորանալով՝ հաճախակի հասնում է էքստազի.

Երնեկ էսպես՝ անվերջ քեզ հետ — իմ կյանքի հետ լինեի,
Հազար երնեկ՝ դաշտում մենակ՝ երկնքի հետ լինեի,
Բայց ո՞վ կրտա էն վայելքը՝ ինքս ինձ էլ չզգայի,
Ու հալվեի, ծավալվեի, ամենքի հետ լինեի...

(ԼԶ)

Երանություն է անվերջ լինել սիրած էակի հետ,— ասում է Թումանյանը։ Հազար երանություն՝ լինել բնության հետ։ Մեծ է ու անարտահայտելի, անհասանելի ու անճառ տիեզերքի վերջ չունեցող ծալքերի մեջ սուզվելու երանությունը, երբ մտքիդ թելը սփռվում է ամբողջ կեցությամբ մեկ, երբ ինքդ քեզ չզգալու, ինքդ քեզ մոռանալու չափ միասնանում ես, ձուլվում ամենքի ու ամենի հետ։

Ասի. «հենց լոկ էս աճյունն է ու անունը, որ ունեմ»...
Երբ ճառագեց անծայրածիր քո ժպիտը հոգուս դեմ.
— Ինչ է աճյունն էդ անկայուն, ու անունը, որ ունես,
Դու աստված ես, դու անհուն ես, անանուն ես ու անես...

(ԽԴ)

Տիեզերքի գրկում պարփակվելու երանությունը, տիեզերքով արբենալու էքստազը այնքան է մեծանում, աշխարհն ու ես այնքան են զոդվում միմյանց հետ, որ այլևս անհնար է դառնում նշմարել մեկի կամ մյուսի ծայրը, բանաստեղծը կորցնում է իրեն, իր ես։ Բայց դա կորուստ չէ մահվան ոլորտում, ուր «չկան մարդիկ և ոչ զգացում»,— ինչպես ասված է «Դեպի անհունը» պոեմում,— այլ կորուստ է կյանքի անծայրածիրության մեջ, կորուստ է նորից գտնելու համար իրեն, իր անհատականությունը՝ հարստացած արդեն աշխարհի համակ էությամբ և արդուզարդով։

Թումանյանի ամենախոր քառյակներից մեկն այս է.

Հազար տարով, հազար դարով առաջ թե հետ, ի՞նչ կա որ,
Ես եղել եմ, կա՞մ, կլինեմ հար ու հավետ, ի՞նչ կա որ,
Հազար էսպես ձևեր փոխեմ, ձևը խաղ է անցավոր,
Ես միշտ հոգի, տիեզերքի մեծ հոգու հետ, ի՞նչ կա որ...

(ԽԲ)

Տարօրինակ կլինի, եթե ասենք, որ այս քառյակում սպիրիտուալիզմ է քարոզվում, հոգու անմահություն և այլն։ Ո՛չ։ Թումանյանը հեռու էր այդ գաղափարներից։ Հաստատելով տիեզերքի անմահությունը, Թումանյանը քառյակում հաստատում է նաև առհասարակ կյանքի, իր, որպես այդ տիեզերքի մի հատվածի անմահությունը՝ ինչ ձևով ուզում է այն լինի, թեկուզ որպես մի հյուլե, որը ֆիզիկապես փոքր լինելով, այնուամենայնիվ մեծ է իր անխզելի կապով գոյության անեզրության հետ։

«Դեպի անհունը» պոեմում ասված է

Թե և կյանք, և մահ — անցավոր, ունայն
Մի մեծ հավերժի ձևերն են միայն... (Լչ 12)։

Այստեղ հավերժի ձևերն են կազմում մի կողմից՝ կյանքը, մյուս կողմից՝ մահը, ըստ որում երկուսն էլ հավասար չափով ունայն են համարվում։ Քառյակում, ընդհակառակը, սոսկ կյանքի հավերժության մասին է խոսքը, այդ հավերժության մեծ բովանդակության մասին, իսկ ունայնության վերաբերյալ ակնարկ անգամ չկա ու չէր էլ կարող լինել։ Թումանյանը տեսնում է կեցության անծայրածիրությունը, տարվում նրանով, ըմբռնում նրա խոր էությունը ու հանգիստ նայում այդ էության արտահայտություններին, դիտում երևույթների ռազմապիսությունը։

2

Անանցի ու հավիտենականի, տիեզերքի և կյանքի էությունը մինչև վերջին հյուլեն ըմբռնելու իղձով, նրա իմաստն առանց մնայորդի քամելու նպատակով, երկբայանքի և տարակուսանքի ամենաչնչին նշույլ անգամ չթողնելու դիտավորությամբ, մի խոսքով՝ ամեն ինչ պարզ պատկերացնելու համար Թումանյանը դիմում է իր հոգու բովանդակ կարողություններին, լուսակաթ աշխարհներում ապրող երազներին, որոնց նա աստեղային է անվանում, անարատ հեռուներում բնակվող խոհերի խոյանքներին, որոնց նա մեծ է անվանում, նրբագոտ մշուշներում սավառնող վերհուշերին, որոնց նա անհիշելի է անվանում։

Խոյանալ մինչև աստղերը՝ դա խիզախ թռիչք է արդեն։ Բայց դիմել վերհուշերին, որոնք անհիշելի են, այս հակասությունը լուծելու համար պահանջվում է իսկապես որ գերագույն լարվածություն։

Աշխարհի, գոյության իմաստը բացահայտելու համար նման լարվածություն է արտահայտված նաև Թումանյանի մի այլ քառյակում (ԽԵ), որը նա գրել է առաջինից (ԽԴ) անմիջապես հետո (առաջինը 1921 թ. մայիսի 16-ին, երկրորդը՝ մայիսի 21-ին)։ Սրանք կարծես երկվորյակներ լինեն։

Բանաստեղծն այդ քառյակում ասում է, որ իր խոր հոգին խոսք է բաց արել աստծու, աշխարհի հետ ու ամեն ինչ մեկ առ մեկ, դարեդար քննում է՝ սկսած անհաս բանից, երբ «չկան էլ չկար» մինչև «վախճանն անվախճանի»։ Բայց ինչպե՞ս կարող է անվախճանը վախճան ունենալ, չկան՝ լինել, անհասը հասանելի, իսկ անչափը չափելի դառնալ (վերջինս «Տիեզերքի ընթերցումը» բանաստեղծության մեջ)։ Սրանք «անհիշելի վերհուշերի» տարբերակներն են՝ սահմանված առավել լուր դարձնելու աշխարհի ըմբռնման անհրաժեշտության զգացողությունը, մտքի զիգզագներով գտնելու իսկության ուղին։ Դրանք մտքի հազարան բլբուլներ են, որ հրաշքով պիտի լուծեն գոյության առեղծվածը։

Թումանյանը, իսկապես որ, լուծեց այդ առեղծվածը, հասավ կեցության ակունքներին, անվախճանի վախճանին, խորամուխ եղավ նրա գաղտնիքներին, լույս աշխարհ հանեց ժամանակի ամենախոր անդունդներում թաղված վերհուշերը ու զգաց աշխարհի խորիմաստությունը, նրա ստեղծարար հզորությունը, Աբովյանի պես փառաբանեց այն («յարդանիտ մեռնեմ, աստված»)։ Իր պոետական ինտուիցիայով նա վերահաս եղավ աշխարհի հավիտենական երիտասարդությանը, ինչպես այսօր մենք վերահաս ենք դրան «աստեղային ասոցիացիաների» փայլուն տեսության կապակցությամբ։

Թումանյանը պոեզիան նմանեցնում է աչքին։ Որքան աչքը բարդ է ֆիզիկական առումով, այնքան նրա պաշտոնը, տեսողությունը պարզ է և հստակ։ Այսպես է ըստ բանաստեղծի և իսկական պոետական երկը. որքան նա բարդ է իր կազմավորման, իր ստեղծման ընթացքում, այնքան պարզ է որպես ընկալում՝ ունկնդրում կամ ընթերցում։

Նույնն է նաև տիեզերքի ճանաչողությունը։ Պոետին հարկավոր էին տասնյակ տարիների հսկայական փորձ, մտքի գերագույն ճիգ՝ բացահայտելու համար նրա գաղտնիքները։ Բայց այդ կատարին հասնելուց հետո ամեն ինչ դառնում է դյուրին ու մատչելի։

Դու մի անհայտ Բանաստեղծ ես, չտեսնված մինչ հսոր.
Առանց խոսքի երգ ես թափում հայացքներով լուսավոր,
Ես էլ, աչքեր, զարմանալի Ընթերցող եմ բախտավոր,
Որ կարդում եմ էդ երգերը էսքան հեշտ ու էսքան խոր...

(ԻԹ)

Տիեզերքի հանդեպ ունեցած հրճվանքը հասնում է իր գագաթնակետին. նրան տրվում է բարձր գնահատական, այն համատարած պոեզիա է և արդեն անվանվում է Բանաստեղծ, մեծատառով Բանաստեղծ։

Եվ ընդհակառակը, իրեն, բանաստեղծին, Թումանյանն իջեցնում դարձնում է ընթերցող։ Բայց դա սոսկական ընթերցող չէ, այլ նույնպես մեծատառով ընթերցող, բախտավոր Ընթերցող, որ զարմանալի հեշտությամբ կարդում է տիեզերքի գիրքը, լուծում նրա առեղծվածը, երգում նրա երգերը՝ ինչ բարդ խազերով էլ նրանք դրոշմված լինեն, պյութագորտականների նման ունկընդրում երկնային ոլորտի հարմոնիան, կանխազգում կեցության օրինաչափությունը, որովհետև ինքն էլ առնչվում է այդ օրինաչափությանը, նրա արտահայտությունն է։

Այսպիսով, ընթերցողը ինքն էլ դառնում է բանաստեղծ։ Գլխատառը արդարացնում է իրեն։

Թերթելով Թումանյանի երկերի հատորը, հանդիպում ես մի բանաստեղծության, որը զարմացնում ու միաժամանակ օրինաչափ է թվում, այնքան հարազատ է վերծանված քառյակին, այնպիսի ճշտությամբ է բացահայտում նրա իմաստը անգամ իր վերնագրով՝ «Տիեզերքի ընթերցումը»։

Անթարթափ աչքով, հարազատ հոգով
Կարդում եմ քո վեհ ազդումներն անվերջ,
Կարդում եմ պայծառ, ուրախ ցերեկով,
Ու գիշերները ահավոր ու պերճ (էջ 129)։

Յուրաքանչյուր ժամ ու րոպե տիեզերքը մատչելի է բանաստեղծին, նա անընդհատ ընթերցում է ու տարվում այդ հսկայածավալ մատյանի վեհ էջերով։

Մեջբերած տողերին նախորդող տողերում բանաստեղծը շնորհակալություն է հայտնում նույն տիեզերքին, որ իրեն վերամբարձ հայացք է տվել սուզվելու գոյության վերին սահմանները, խոյացող միտք է տվել, իր ճակատին ժպիտ է վառել։ Առավել շնորհակալ է,

Որ կապել ես մեզ, հոգիս քեզ արել...

«Հոգիս քեզ արել...» ժողովրդական արտահայտությամբ Թումանյանն ուզում է ասել, որ ինքը տիեզերքի մասից ու արյունից է, նրա անդրադարձումն է, նրա հայելին, որ նա մեծի փոքրն է։ Թումանյանը տեսնում է մակրոկոսմի և միկրոկոսմի նմանությունը, մի կաթիլ ջրի մեջ՝ ամբողջ աշխարհը։ Իսահակյանի նման (առավելապես «Ուստա Կարոյում») Թումանյանն էլ կարողանում է ամենավերացական գաղափարները տալ ժողովրդական պարզ պատկերներով ու հասկացողություններով։ Դրա պատճառն այն է, որ այդ հասկա-

ցողությունների ակունքը, նրանց դարավոր հեղինակը հենց ինքը ժողովուրդն է։

Իր միասնությունը տիեզերքի հետ, իր առնչությունը աշխարհի բոլոր դրրվագներին, իր սերը դեպի այդ աշխարհը, Թումանյանը շատ հետաքրքիր ու պատկերավոր ձևով տալիս է նաև հետևյալ քառյակում.

Իմ կրնունքին երկինքը՝ ժամ, արևը՝ ջահ սրբրազան,
Ծիածանը՝ նարոտ եղավ, ամենքի սերն՝ ավազան.
Սարը եղավ կրնքահայրը, ցողը՝ մյուռոն կենսավետ,
Ու կրնքողս նա ինքն եղավ, որ սահմանեց ինձ պոետ...

(Խէ)

Ամեն ինչ այստեղ ներկայացված է տիեզերական չափերով, երկինքը՝ եկեղեցի, արևը՝ ջահ, ցողը՝ մյուռոն և այլն։ Քրիստոնեական այս արարողությունը, անսահմանորեն ընդլայնվելով, կորցնում է իր կրոնական նշանակությունը և վերածվում տիեզերքի, աշխարհի, գոյության մեծարման ու պաշտամունքի, նրա հետ ունեցած սերտ կապի շեշտման։

Այս առումով մի այլ քառյակում (էջ 128) բանաստեղծին տաճարները բանտ են թվում, ուր աստված պահվում է փակի տակ։ Բայց չէ՞ որ «... Ազատ նա ժպտում է ամենուրեք ամենքին», չէ՞ որ իմաստը, գեղեցկությունը, բարիքը տարածված են տիեզերքով մեկ։ Կարելի՞ է ազատությունը խցկել դագաղի մեջ, անհունությունը հունի մեջ դնել, անեզրը եզրի մեջ պարփակել։ Թումանյանը սովորություն չունի ծիծաղելու մարդու գործի կամ խելքի վրա, բայց այստեղ սույն կապակցությամբ այդ նա ստիպված է անել...

Կարևոր եզրակացությունների կարելի է հանգել, եթե այս վերջին երկու քառյակներից հետո անցնենք «Հոգեհանգիստ» հայտնի բանաստեղծությանը, գրված 1916 թվականին, հայ ժողովրդին հասած մեծ աղետի կապակցությամբ։ Այստեղ էլ չափանիշները հսկայական են։ Բանաստեղծը վերջին հանգիստն է կարդում իր ժողովրդի անբախտ զոհերին, որոնք հազար հազարով փռված են ու ցրված

Մինչև Միջագետք, մինչև Ասորիք, մինչև Ծովն Հայոց,
Մինչև Հելլեսպոնտ, մինչև Պոնտոսի ափերն ալեկոծ...

Հայոց «հրդեհի կարմիր բոցերից» վերցրած կրակով նա վառեց մեր աշխարհի մեծ կերոնները.

Մասիսն ու Արան, Սիփանն ու Սրբմանց, Նեմրութ, Թանդուրեք։

Զիրավի ձորը նրա բուրվառն էր, իսկ Եփրատն ու Տիգրիսը ձայնակցեցին նրան սաղմոս կարդալով։

Սակայն, տորք-անգեղյան չափերով կատարած այս ծիսակատարությունը հանդիսավոր լինելով, այնուամենայնիվ պատարագ չէր՝ սահմանված փառաբանելու աշխարհը, թեև վերջինիս արժեքն ու վեհությունը մնում են անսասան. երկինքը բանաստեղծության մեջ շարունակում է մնալ խաղաղ, ամպերը՝ բուրավետ, Արագածի կանթեղը՝ պայծառ։

«Հոգեհանգիստը» սահմանված է այն բանի համար, որպեսզի բանաստեղծը, զինված հենց աշխարհի այդ բարձր գնահատականով, բայց լցված ազնիվ ցասումով, կանգնած «... խոժոռ, մենակ ու հաստատ, Մասիսի նման» անողոք մեղադրանք կարդար մարդկության այն ոճրագործ հատվածին, որը հոշոտել էր մի ամբողջ ժողովուրդ։

Եկեղեցական արարողությունը, այդպիսով, ընդլայնվելով, նորից կորցրնում է իր կրոնական իմաստը ու վերածվում քաղաքացիական մեծ ակտի, որի կենտրոնական անձնավորությունն այլևս քահանան չէ, այլ Հայկական պարի կատարից իր հուժկու խոսքն ասող, մարդկության դատախազը դարձած քաղաքացի բանաստեղծը։

Թումանյանի սուր աչքի առջև ոչ միայն բնությունն է բացում իր վարագույրը, այլև մարդու հասարակական կյանքն՝ իր բարդ փոխհարաբերություններով հանդերձ։

3

Աշխարհը մեծ է և հավիտենական, իսկ մարդը նրա հարազատ հատվածն է, նրա պատկերի կրողը իր մեջ։

Թե որքան աշխարհը առատաձեռն է իր բարիքներից մարդուն բաժին հասցնելու գործում, այդ ամենուրեք ցոլում է Թումանյանի երկերում, բայց առանձնապես շեշտված հանդես է գալիս «Իմ երգը» (էջ 101) բանաստեղծության մեջ։ Պոետն ասում է, որ անտակ, անծայր գանձեր ունի ինքը, այդ գանձերը ոչ թե ոսկի են կամ արծաթ, այլ բարություն, շնորհ ու սեր։ Այդ ամենը նա շռայլորեն ստացել է «վերուստ», բնությունից, աշխարհից ու իր հերթին էլ շռայլորեն բաշխում է մարդկանց՝ ձրի, առանց սպասելիքների, առանց հատուցման ակնկալության։

Բայց բանաստեղծը ոչ միայն անհատնում բարության, շնորհի և սիրո տեր է, այլև մեծ հոգի ունի, լայն ու ազատ սիրտ, չի վախենում չարից, փորձանքից։ Հիշենք «Վայրէջքը»։

Բանաստեղծը գիտակցում է, որ ինքը գտնվում է կեցության կատարին, զգում է իրեն ամբողջովին շաղախված այդ երջանկությամբ, որին նա արժանացել է ոչ թե այսօր կամ երեկ, այլ իր ծննդյան հենց առաջին օրից, որը և նա անվանում է պայծառ։

Բազմաթիվ բանաստեղծներ ու մտածողներ անիծել են իրենց ծննդյան օրը։ Հայ հանճարեղ բանաստեղծը ոչ թե անիծում, այլ մեծարում է այդ օրը, որով նա շտեսնված ուժով նորից ու նորից մեծարում է կյանքը, նրա բարգավաճումն ու ծավալումը։ Եվ նա այդ անում է չնայած իր ժողովրդի դաժան անցյալին և իր իսկ նկարագրած տխուր ներկային։

Ճոխ է աշխարհը, հարուստ, անհատնում ու բոլոր այդ հատկություններով էլ նա օժտել է բանաստեղծին, որը հողից և աստղերից ստացածը նույնպիսի ճոխությամբ, անահ և աներկյուղ վերադարձնում է աշխարհին, մարդկանց.

Իր տվածն եմ տալիս իրեն (էջ 101)

ասում է նա, կրկնելով ժողովրդական իմաստուն ասացվածքը, որի մեջ հաստատվում է, մի կողմից, աշխարհի առաջնությունը մարդու նկատմամբ և, մյուս կողմից, մարդու՝ կատարյալ, մինչև վերջին հյուլեն հարազատությունը աշխարհին։ Այդ հարազատությունը, այդ անխզելի կապը աշխարհի հետ Ավ. Իսահակյանը ևս արտահայտել է, անվանելով իր առջև ծառացած ժայռաբեկորին «Իմ մեծ ախպեր»։ Այո՛, մեծ ախպեր, որից նա ստացել է ամեն ինչ ու այսօր էլ տալիս է նրան, տալիս ադամանդներ, որոնք կախարդական ուժ ունեն զարդարելու ոչ թե մի գեղեցկուհու կուրծքը, այլ հազարավոր մարդկանց հոգիները։

Թումանյանն ասում է, որ «էլ աշխարհ չեմ գալու հո նոր», նա գիտե, որ գոյությունը երկրային կեցությամբ է սպառվում և դա ոչ թե ընկճում է նրան, այլ, ընդհակառակը, ոգևորում, բազմապատկում նրա ուժերը՝ առավել վերցնելու աշխարհից, առավել տալու նրան։

«Իմ երգը» բանաստեղծությունը գրված է 1918 թվականի սկզբին։

Ահա թե ինչ է ասում պոետը ուղիղ երեք տարի անց, 1921 թվականի սկզբին.

Առատ, անհատ ասածու նման՝ միշտ տեղալուս հոգնել եմ ես.
Հոգիս ծարավ՝ սրբան-նրբան մրտիկ տալուց հոգնել եմ ես.
Մինը պիտի գար իմ դեմը՝ ճոխ ու շրոայլ անհաշիվ,
Ամեն ճամփում բսպասելուց ու փրնտրելուց հոգնել եմ ես...
(ԼԸ)

Որ աշխարհից բանաստեղծը շռայլորեն շնորհ է ստացել, այդ մնում է անհողդողդ։ Որ նա նույնպես շռայլորեն շարունակում է շաղ տալ այդ շնորհը, սա ևս մնում է անհողդողդ։ Բայց այս շռայլ հատուցումից բանաստեղծն արդեն հոգնել է...

Նույն 1921 թվականի մայիսին նա գրում է.

Ամեն անգամ քո տրվածից երբ մի բան ես դու տանում,
Ամեն անգամ՝ երբ նայում եմ, թե ինչքան է դեռ մնում,
Զարմանում եմ. թե՝ ով շռայլ. ինչքա՜ն շատ ես տվել ինձ.
Ինչքան շատ եմ դեռ քեզ տալու, որ միանանք մենք նորից...
(ԽԱ)

Նորից իր տեղումն է աշխարհը ու նրանից առատորեն ստացած շնորհը։ Բանաստեղծն էլ շարունակում է հատուցել։ Սակայն այդ հատուցումը, այդ տալիքն այնքան է մեծ, անելիքն՝ այնքան ամեհի, որ պոետի մեջ հեռավոր մի կասկած է հարուցվում դրանց կատարման հնարավորության մասին։

Վերջապես, նույն թվականի սեպտեմբերին նա գրում է.

Կյանքս արի հրապարակ ոտքի կոխան ամենքի.
Խափան, խոպան ու անպտուղ, անցավ առանց արդյունքի։
Ինչքա՜ն ծաղիկ պիտի բուսներ, որ չբուսավ էս հողին...
Ի՜նչ պատասխան ես պիտի տամ հող ու ծաղիկ տրվողին...
(ԽԸ)

Արդեն ոչ թե կասկած հատուցումն իրականացնելու կապակցությամբ, այլ խոր հիասթափություն. աշխարհից ստացածի դիմաց բանաստեղծը տալու համարյա ոչինչ չունի։ Նրան թվում է, թե իր կյանքը անպտուղ է անցել։ Պատասխանատվության զգացումը անհունորեն սրվել է նրա մոտ, իսկ ուժերը՝ նվազել։ Բանաստեղծը ծանր վիճակի մեջ է։ Բայց այդ ծանր վիճակում անգամ աշխարհը նրա համար մնում է նույնը՝ ճոխ, աստեղային, հող ու ծաղիկ տվող։ Աշխարհը չէ մեղավոր, որ նա,— ինչպես ասում է բանաստեղծը մի ուրիշ քառյակում (ԼԲ),— չհասավ ոչ իր երազին, ոչ էլ մուրազին, որ իր «կյանքը թեթև տանուլ տված գրաղ եղավ, անցկացավ»։ Իր պակասը Թումանյանը աշխարհին չի վերագրում, անձնական ողբերգությունը նա չի վերածում տիեզերական ողբերգության։

Թումանյանի աշխարհայեցողության մեջ աշխարհը բոլոր դեպքերում էլ մնում է անսասան, իր տեղում ամուր նստած։ Աշխարհին, մարդկանց է տրվում առաջնությունը, ուրիշներին և ոչ թե իրեն։

Այդ արտահայտվում է նաև բարոյական ասպարեզում, օրինակ՝ «Սասունցի Դավթի» մեջ նրա առաջին մասի «Դավթի մնաս բարովը» սևագիր հատվածում (էջ 122) կարդում ենք.

Սասման քույրեր բարով մընաք,
Քուրությյուն ելք արել ինձ,
Սասման մերեր, բարով մընաք,
Մերությյուն ելք արել ինձ։
Ախպեր տղերք, բարով մընաք—
Մեր աշխարհքին, մեր հանդին,
Խընդում անեք, թե հանդ դրնաք,
Զըմոռանաք ձեր Դավթին...

Զարմանալի մերվածություն ամբողջի և բոլորի հետ։ Դավիթը իր քրոջը չէ միայն մնաք բարով ասում, այլ բոլոր քույրերին, իր մորը չէ միայն մնաք բարով ասում, այլ բոլոր մայրերին։ Նա դիմում է սրրության սրբոց «մեր աշխարհքին» ու «մեր հանդին»։ Այդ նա անում է «ախպեր տղերք»-ի միջոցով, որովհետև միայն հարազատությունը չէ արդեն, որ Դավթին կապում է նրանց հետ, այլ առաջին հերթին աշխարհքը, այսինքն՝ հայրենիքը, նրա պաշտպանությունը և ապա հանդը, այսինքն՝ աշխատանքը, ազնվորեն դատած հանապազօրյա հացը։ Մերվածությունն ամբողջի հետ առավել շեշտվում է հետևյալ տողերում.

Բարով մընաք դուռ ու դրկից,
Մեծով փոքրով — մնաք բարով,
Ես կըպակսեմ մեր աշխարհքից,
Դուք ապրեցեք բախտավոր...

Սայաթ-Նովան ասել է՝ «Թե կու պակսիմ, քիզ կու պակսիմ, աշխարհիս մե մազ չի պակսի»։ Սայաթ-Նովան գիտե, որ ինքը հանճարեղ բանաստեղծ է ու դրա լավագույն վկայականը նրա հայտնի տողերն են իր բունիաթի քարակոփ լինելու մասին։ Դավիթը գիտե, որ ինքը հերոս է, որ գնում է զոհվելու աշխարհի համար ու դրա լավագույն վկայականը հենց մեջբերված չորս տողերն են։ Բայց ոչ Սայաթ-Նովան, ոչ էլ Դավիթը աշխարհից իրենց պակասելուն ճակատագրական նշանակություն չեն տալիս. մեզնից հետո էլ, ասում են նրանք, աշխարհը կշարունակի ընթանալ իր կարգով։ Սա առավել մերվածություն է նշանակում մարդկանց հետ։

Ծովասարի պաղ աղբյուրներ,
Բարով մընաք, ախ սրսաք,
Կրռիվ կերթամ, կը ծարավեմ,
Դուք հորդ մնաք, պաղ մընաք։
Ծովասարի անուշ հովեր,
Բարով մընաք, գով մընաք,
Կրռիվ կերթամ, ես կը շոգեմ,
Դուք գով մընաք, հով մընաք...
(էջ 122)։

Թեև Դավիթն այստեղ բնությանն է մնաք-բարով ասում, բայց այս խոսքերն էլ, վերջին հաշվով, վերաբերում են մարդկանց, ամբողջ աշխարհին։

Դավիթը գնում է աշխարհից հանուն աշխարհի, թողնելով, որ շեն մնա այն ուրիշների համար. ժողովրդական հումանիստական աշխարհայեցողու-

թյան բարձրակետն է դա։ Դավիթը հեռանում է, բայց աշխարհը շարունակում է անհողդողդ մնալ իր տեղում։

4

Ավետիք Իսահակյանն ասել է Թումանյանի մասին, որ նա ոչ թե մի, այլ մի շարք գլուխ-գործոցներ ունի։ Եթե առարկություն արվի այն մտքի դեմ, որ քառյակները մեծ պոետի ստեղծագործության բարձրակետն են, ապա, համենայն դեպս, կասկածից վեր է, որ նրանք այդ գլուխ-գործոցների ամենափայլուն էջերից են։

Սակայն, քառյակներն էլ ըստ ամենայնի հավասարարժեք չեն. նրանց մեջ կան այնպիսիները, որոնք հատկապես աչքի են ընկնում թե՛ իրենց գեղարվեստական արտահայտչությամբ և թե՛ մտքի խորությամբ։ Այդպիսիներից է Խայամին նվիրած հայտնի քառյակը (էջ 128)։

Խայամն ասավ իր սիրուհուն.— ոտրդ ըզգույշ դիր հողին,
Ո՞վ իմանա՝ որ սիրունի բիբն ես կոխում դու հիմի...»
Հե՞յ ջա՜ն, մենք էլ ըզգույշ անցնենք, ո՞վ իմանա, թե հիմի
Էն սիրուհու բի՞բն ենք կոխում, թե հուր լեզուն Խայամի...

Ամբողջ քառյակից ելնում է խոսքի և շարժման իմաստուն մի հանգստություն։ Զորս տողի վրա էլ սփռված է նուրբ թախծի՝ աննկատելի լինելու չափ թափանցիկ մի քող. դա ափսոսանք է այն մասին, որ կյանքը, այնքան գեղեցիկ լինելով, այնուամենայնիվ անցավոր է, որ բոլոր մահկանացուներն էլ անխտիր հող պիտի դառնան։ Իսկ դրա հիմքում այն հասկացողությունն է դրված, որ կյանք ասածը հենց այս է որ կա, ընթանում է այստեղ, երկրի վրա, այն հողի վրա, որով մեղմ սահանքով անցնում է Խայամը իր նագանի ընկերուհու հետ։

Խայամն իր սիրածի հետ խոսում է սիրունների մասին, բայց խանդի հեռավոր նշույլ անգամ չի ալեկոծում սիրածի հոգին։ Պարզ է թե ինչու. Խայամը սիրունների մասին խոսում է ոչ որպես տարփածուների, այլ որպես գեղեցկության մարմնավորման մասին, գեղեցկության, որը զարդարում է կյանքը, դարձնում նրան հմայիչ։ Գեղեցկության պաշտամունքն է այստեղ իշխողը, անհանդուրժելի է նրան աղարտող որևէ հանգամանք։

Քառյակում ներդաշնակ համակեցության մեջ են անանձնականը՝ սիրունների բիբը, անձնականի՝ Խայամի հուր լեզվի հետ, արտաքինը՝ կնոջ գեղեցկությունը, ներքինի՝ բանաստեղծի խոսքի հետ։ Սկզբում մենք գտնվում ենք անանձնականի, արտաքինի, կնոջ գեղեցկության սահմաններում, քառյակի վերջին երկու բառով միայն գեղեցկությունից, սիրունի բիբից Թումանյանը մի կամար է կապում, ցատկում կատարում դեպի մի այլ, առավել մեծ արժեք՝ Խայամի լեզուն, նրա ավյունով լի իմաստուն խոսքը, նրա ստեղծածի անմար բոցը։ Խիզախ է այդ ցատկումը, հսկայական՝ կապված կամուրջի թռիչքը, բայց և ամուր են նրա հիմքերը։

«Դեպի անհունը» պոեմում գրված է.

Նրանից հետո դե՛ եկ՝ իմացի՛ր,
Թե ով է թաղված քու ոտի տակին,
Ի՞նչ ցեղից էր նա, ի՞նչ ձիրքեր ուներ.

Անահ հերո՞ս էր, կեղանի մի կի՞ն,
Անհոգ մի ջահե՞լ, անկշտում ագա՞հ,
Աղքա՞տ, թե հարո՞ւստ,— ձա՞յն, նշան չկա...
(էջ 15)։

Այս տողերի և քառյակի ելակետը նույնն է. մահվանից հետո մարդիկ հավասարապես հող են դառնում։ Սակայն տարբերությունը սրանց մեջ շատ ավելի մեծ է, քան այդ ընդհանրությունը։

Մեջբերված տողերը սպառվում են հուսալքված, վերջին հաշվով սառն ու անտարբեր հարցումով այն մասին, թե «ով է թաղված քո ոտի տակին»։ Ու քանի որ այս հարցին պատասխան չկա, ամեն ինչ էլ դրանով ավարտվում է։ Համատարած մահ, գերեզմանային լռություն. «ձայն, նշան չկա...»։

Քառյակը, ընդհակառակը, կանգ չի առնում այստեղ, այլ հենց այստեղից է սկսում և այստեղից սկսելով ոչ թե մահ է տեսնում իր շորս կողմը, այլ կյանք։ Նա արձանագրողի դերում չի մնում, այլ ապրողի, հուզվողի, կարեկցողի։ Նա չի մոտենում բոլորին անխտիր, լինի նա անահ հերոս, թե անկշտում ագահ, աղքատ թե հարուստ, նա արժեքավորում է երևույթները, վեհացնում նրանց. նա լսում է ձայն, տեսնում նշան։ Ու մինչդեռ պոեմը մնում է սովորական, բազմիցս կրկնված, կյանքը ոչ միայն առաջ չմղող, այլ, ընդհակառակը, կանգնեցնող ճշմարտության ոլորտում,— քառյակը տալիս է բարձր իմացականություն, մեծարում գեղեցկությունն ու հանճարը՝ որպես կյանքի հավիտենական սկզբունքներ։

Կյանքի անցավոր լինելու հանգամանքը, որի վրա Թումանյանը քննարկված քառյակում հենց նույն կյանքի վեհության մոմենտն է կառուցում, այդ հանգամանքը, արդեն որպես ինքնուրույն մոտիվ, իր արտահայտությունն է գտնում նաև պոետի ուրիշ բանաստեղծություններում.

Հե՛յ, ճամփանե՛ր, ճամփանե՛ր.
Անդարձ ու հին ճամփաներ,
Ովքե՞ր անոան ձեզանով,
Ո՞ւր դնացին, ճամփաներ...
(ԽԹ)

Նույն թախիծով է տոգորված «Աղբյուրները հնչում են ու անց կենում...» քառյակը, ուր պոետները, ձայնակցելով աղբյուրներին, «... կանչում են ու անց կենում»։ Նույնն առկա է նաև «Կանցնեն օրերն...» բառերով սկսվող բանաստեղծության մեջ, ուր, դիմելով իր դստեր, Թումանյանն ասում է, որ օրերի պես «կանցնի քո հերն էլ, Անուշ ջան...» (էջ 126)։ Այդ մոտիվներն են հնչում նաև «Հիշում ես Բորժոմն...», «Քոշաքարում...» և «Սիրիուսի հրաժեշտը» բանաստեղծություններում։

Թումանյանի մի քառյակ (Դ) գրված, ըստ երևույթին, պոետի մերձավորներից մեկի մահվան կապակցությամբ, սկսվում է

Ետ չեկա՞վ...

բառերով. մի ուրիշը (Թ), ուղղված անցած օրերի խնդությանը, սկսվում է

Ե՛տ եկե՞ք...

բառերով։ Սակայն, այս «ետ եկեք»-ը, որտեղ, թվում է, պետք է լիներ հույսի թեկուզ հեռավոր նշույլ, բնավ չի մեղմացնում «ետ չեկավ»-ի կսկիծը, այլ, ընդհակառակը, խորացնում է այն, ավելացնելով արտահայտած բաղձանքի իրականացման կատարյալ անհնարինության սուր գիտակցումը։

Նույն մոտիվին, պարուրված վերհուշի մեղմությամբ, հանդիպում ենք նաև «Պատրանք» (էջ 101) հիանալի բանաստեղծության մեջ։ Պոետին պատկերանում է իրենց շունը՝ Ջալակը և նրա ետևից գնացող իր թաչ ախպերը։ Կուսական անտառում զրնգում են նրանց ձայները, պոետը նորից ու նորից կանչում է ու թվում է, թե կգան նրանք.

Ջո՛ւս... վաղուց են, ա՜խ, նրանք
Մեր սարերից գընացել,
Էն գիլ ձևերն է մենակ
Իմ ականջում մընացել...

Երբ հաջողվում է բացահայտել Թումանյանի որևէ բանաստեղծության իմաստը, տեսնում ես, թե ինչպես, կարծես արթնանալով կամ թաքստոցից դուրս գալով, սկսում են հնչել, կամերտոնի պես ձայնակցել նրա համանման գործերը։

Ահա Թումանյանի վերջին, մահվանից մի քանի ամիս առաջ գրած սքանչելի քառյակը.

— Էս է, որ կա... Ճիշտ ես ասում, թասդ բե՛ր։
Էս էլ կանցնի հանց երազում, թասդ բե՛ր։
Կյանքն հոսում է տիեզերքում զրնգալեն,
Մեկն ապրում է, մյուսն սպասում, թասդ բե՛ր...

(էջ 122)։

Թումանյանը կարծես խոսք է բացել մեզ հետ աշխարհի բարձրաբերձ տանիքից, տիեզերքի գագաթից ու հանդիստ և իմաստուն նրա կենացն է խմում։ Զարենցը անտարակույս հենց այստեղ է հանդիպել պոետին Հոմերոսի և Գյոթեի հասարակության մեջ՝ նստած սեղանի շուրջը։

Այո՛, այս է, որ կա, և ուրիշ ոչինչ։ Մեկը սպասում է, մյուսը ապրում, մեկը գալիս է, մյուսը գնում, հերթով, ինչպես ասված է «Մնացել է բերդը մեզ...» քառյակում (σΖ)։ Բայց կյանքը թեև երազի նման է, սակայն երազ չէ, այլ իրականություն։ Այն հոսում է, չի դադարում իր տեղում, հոսում է ամբողջ տիեզերքով մեկ, զնգալեն։

Զնգում է Խայամի հուր լեզուն, նրա խոսքը սիրունների մասին, զնգում է Թումանյանի հոգին, նրա հիացմունքը հանդեպ տիեզերքի վեհափառ շենքը, զնգում է Դավթի վեհանձնությունը, նրա մարդկայնությունը։ Աշխարհը իր սքանչելիքներով հանդերձ, կյանքը իր բարիքների հետ միասին, մարդը իր շնորհքով՝ այս ամենը զրնգուն մի երգ է, սրբազան դող, խորիմաստ, մեծագույն արժեք։ Անցավորը նսեմանում է կեցության մշտնջենականության առջև, մինոր տոները զիջում են իրենց տեղը զիլ մաժոր տոներին, խինդը սփռվում է աշխարհով մեկ, կյանքը նորից նոր հաղթանակում Թումանյանի պոեզիայում ու ինքնաբերաբար, համակված «Վայրէջքի» զվարթությամբ, մեր բերնից թռչում է «թասդ բե՛ր» բացականչությունը։

5

«Իմ Արփիկին» բանաստեղծության մեջ (էջ 126) Թումանյանը տիեզերք է անվանում իր հոգին և ասում, որ նա անդունդներ ունի։ Այդպիսի մի անդունդ հենց նոր տեսանք. դա մարդու կյանքի, առհասարակ աշխարհի անցա-

վոր լինելու հանգամանքն է։ Ճիշտ է, հաղթահարվեց այն, բայց դրանով հարցը չի փակվում։

«Հե՜յ, ազատ մարդ...» և «Ազատ օրը...» բառերով սկսվող քառյակները (Լ և ԼԲ),— սրանց ևս կարելի է երկվորյակներ անվանել,— «Երկար, երկար ման եկա...» սկզբնատողով աննման բանաստեղծությունը (էջ 126), բացում են նոր անդունդներ, կանգնեցնում մարդուն նորանոր դժվարությունների ու խորդուբորդությունների առջև։

Առաջին քառյակում Թումանյանը, ելնելով հայտնի՝ կյանքի անցավոր լինելու մոտիվից ու անվանելով մարդուն ազատ և անգոհ, կյանքը՝ կարճ, իսկ միտքը՝ երկար, հորդոր է կարդում նրան.

Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրվան էս ճամփեդ...

Երկրորդ քառյակում արդեն ելակետը իսկական թումանյանական մոտիվն է, այն, որ աշխարհը շեն է և լի, որ մարդու ձեռքին է ամենայն բարիք, նրան տրված է ազատ օր ու ազատ սեր, բայց և այնպես՝

Տանջում, տանջվում, որոնում է ու դժբախտ է նա կրկին...

Թումանյանն այլևս մի անհատի չի դիմում, այլ թևակոխում է մարդկային փոխհարաբերությունների ասպարեզը։ Նա չի ասում սոսկ, թե մարդը տանջվում է, այլ ասում է նաև, որ նա տանջում է։ Այս հանգամանքն արտահայտվում է նաև նույն քառյակի հորդորի մեջ.

Է՜յ, անխելք մարդ, երբ տի թողնես ապրողն ապրի սրտալի...

«Երկար, երկար ման եկա...» բանաստեղծության մեջ մարդու դժբախտությունը ավելի շեշտված է հանդես գալիս։

Աշխարհը լայն է և արձակ, գեղեցիկն ու բարին առատորեն տարածված, բախտը փռված մեր առջև այնքա՜ն շատ ու մոտ և, այնուամենայնիվ, կյանքը չար է ու դժվար, բանաստեղծի քնարը վշտոտ, և մարդը, դժբախտ զգալով իրեն, բախտ է որոնում երկնքում։

Պարզ է, որ բանաստեղծի այս ցավը անդրադարձնում է հասարակական կյանքի սուր ներհակություններն ու հայ ժողովրդի ծանր վիճակը, որը չտեսնված ուժով դրոշմվել է դեռ 90-ական թվականների պոեմների և լեգենդների մեջ։

Այսօր էլ մեր ականջում հնչում է անիծած հարսի աղեկտուր ճիչը, Պողոս-Պետրոսի վայ-վույը, Անուշի տրագիկ ճակատագիրը ողբող Դերեզի վուշ-վուշը, Մարոյի մոր լացը։ Մեր աչքերի առջև է արցունքներից գոյացած Փարվանա լիճը, Սաքոյի խելագար վազքը սարերում, մեռած Գիքորի շորերը Համբոյի ձեռքին։

Ժողովրդի այս կսկիծը հետագայում Թումանյանի քառյակներում հանդես է եկել առավել ընդհանրացած ձևով.

Ամեն մի սիրտ ցավով լցվեց մեր դարում,
Ցավոտ սրտով աշխարհ լցվեց մեր դարում.
Ցավոտ աշխարհքն եկավ լցվեց բովանդակ
Իմ սիրտը բաց, իմ սիրտը մեծ մեր դարում...

(էջ 128)։

Այս ցավը երբեմն այնքան է համակում Թումանյանին, որ նա մոռանում է անգամ, թե երբ են իր հոդում փայլել ուրախ օրեր (ԾԲ), այնքան է հուսահատեցնում նրան, որ նա, հենց նոր անվանելով իր սիրտը մեծ ու բաց, մարդուն համարում է «վար մնացած մարդ» (ԾԱ), իրականությունը՝ ցեխ ու վայրենի աղմուկ (ԻԸ)։

Հենց այս ցավից ազատվելու ելք գտնելու համար է, որ դեռ 90-ական թվականներին Թումանյանը հղացավ գրելու «Հազարան բլբուլ» մեծ պոեմը, որը, ըստ հեղինակի, պետք է լիներ նրա ամբողջ ստեղծագործության ամփոփումը, նրա հումանիստական աշխարհայեցողության ամենաբարձր արտահայտությունը։

Ժամանակն անցնում էր, իսկ պոեմը չէր ավարտվում, հեքիաթային թռչունը իր փրկարար երգով չէր թևակոխում մեր սահմանները։ Թեև բանաստեղծը շատ զբաղվեց, պոեմը, այնուամենայնիվ, անավարտ մնաց, նման այն կախարդական, բայց ջարդված հայելուն, որի փշուրները ոչ մի կերպ չեն հարմարվում իրար։

«Հազարան բլբուլը» չէր էլ կարող ավարտվել։

Ծանր կացության մեջ էր հայ ժողովուրդը։ Իննսունական թվականներին ծայր առած սարսափելի կոտորածները Տաճկահայաստանում 1915 թվականին ավարտվեցին ժողովրդի բնաջնջումով։ Անդրկովկասում 1905—1906 թվականներին կազմակերպվում էին ազգային ընդհարումներ հինավուրց հարևանների՝ հայերի և ադրբեջանցիների միջև։ Պատկերը լրացվեց առաջին իմպերիալիստական պատերազմի արհավիրքներով։ «Հազարան բլբուլի» խոսքով ասած՝ չորը խփել էր ամբողջ տշխարհին։

Կարելի՞ էր արդյոք դաժան այս իրականությանը, Կրուպպի թնդանոթներին ու տաճկական յաթաղանին հակադրել, որպես փրկության միջոց, երգը, երաժշտությունը, արվեստը, խոսքը, որքան էլ նրանք զմայլելի լինեին։ Պարզ է, որ թավալգլոր ընթացող պատմական դեպքերի հարվածների տակ «Հազարան բլբուլի» կոնցեպցիան մարդուն ներուստ վերափոխելու մասին կամաց-կամաց պետք է մաշվեր, քայքայվեր։ Հասկանալի է, թե ինչպես, պատրանքների նման փլուզումից հետո, կյանքը հեղաշրջելու այլ ուղիներ չտեսնելով, հումանիստ պոետը եկավ հասավ գազան, մարդակեր ու մարդասպան մարդու կերպարին («Հոգեհանգիստ», ԻՁ), որն ավելի վատթար դատավճիռ է մարդու և իրականության նկատմամբ, քան երբ վերջինս անվանվեց ցեխ ու բնութագրվեց որպես վայրենի աղմուկ։

Թումանյանը իսկապես որ կանգնած էր անդունդի առջև։

Բայց հիշենք «Վայրէջքը», մի երկ, որ կարծես ամփոփում է իր մեջ Թումանյանի ստեղծագործության ուղն ու ծուծը, նրա էությունը, տալիս է ոչ միայն այն, ինչ կար նրա գրության ժամին, պոետի քառասնամյակին, այլև մարդարեանում ապագայի նկատմամբ։

«Վայրէջքում» ասված է, որ ահարկու ճամփաներ անցնելով է միայն պոետը կարողացել հասնել լուսալիր բարձունքներին։ Մենք տեսանք այդ ահարկու ճամփաները։ Բայց Թումանյանը վախկոտներից չէր։ Ընդհակառակը, նա անահ էր Սասունցի Դավթի ու իր հեքիաթային հերոսների պես, որոնք խորտակում էին ոսոխներին, ոչնչացնում չար դևերին, վերացնում ամեն մի խոչընդոտ ու հասնում իրենց իդեալին։ Անկոտրում էր ժողովրդից ժառանգած Թումանյանի օպտիմիզմը։ Լինում էին րոպեներ, երբ բանաստեղծն ընկճվում՝

էր, բայց նա երբեք չէր հուսահատվում։ Պատահում էր, որ նահանջում էր, բայց նրա հաջորդ քայլը առաջխաղացումն էր։ Հանդամանքները ստիպում էին քայլել նրան անդունդի եզերքով, բայց նա երբեք չէր սայթաքում նրա խորքը։ Թումանյանը շատ ցավ, նենգ ու դավ էր տեսել, բայց ամենը տարել էր, ներել ու սիրել, վատը լավ էր տեսել նա (ԺԴ)։ Նրա հոգին ժպտում էր ամենքին, չարին էլ, բարուն էլ, որից չարը կծկվում էր, բարին ծավալվում (ԺԷ)։ Պոետի վիշտը անապ ու խոր ծով է, բայց և այնպես

Իմ զայրույթը լիքն է սիրով,
Իմ գիշերը լիքն աստղերով... (Զ)

Զայրույթը նահանջում է սիրո առջև, աստղերը նսեմացնում են գիշերվա մթությունը։ Անգամ մարդասպան անվանելով մարդուն, Թումանյանը հավատում է, որ նա, թեև շատ հեռուներում, բայց և այնպես նորից մարդ կդառնա։ Ամբողջովին համակված մահով «Դեպի անհունը» պոեմում, բանաստեղծը, այնուամենայնիվ, աշխարհն այնտեղ լույս աշխարհ է անվանում։ Նրա գիշերը երբեք անաստղ չի լինում, ամենածանր, ամենաճգնաժամային պահին անգամ Թումանյանը չի դադարում Թումանյան լինելուց։

Ինքնարյուրական թվականների վերջերին Թումանյանը գրել է ժողովրդական մոտիվներով մի շարք բանաստեղծություններ՝ «Սոխակի վիշտը», «Գարնան առավոտ», «Արագիլ» և այլն, որոնք կարծես նրա զվարթ ու կենսուրախ լիրիկայի հետագա զարգացման պատվանդանն են հանդիսանում։

Այդ բանաստեղծություններից առաջինի՝ «Սոխակի վշտի» մեջ նկարագրված է սոխակի հուսահատությունը ձմեռվա կապակցությամբ, նրա սիր ու վախը, կուչ-կուչ լացը, որ այնուամենայնիվ ավարտվում է ուրախ հեռանկարով.

Էլի կուգա բեզ նոր գարուն
Արև ծագի էս վայրերուն,
Հալին ձյուներ մեր սարերուն,
Բացվին ջրեր աղբյուրներուն,
Ու շուրջ առած քո ձագերուն
Բարև կուտաս ծաղիկներուն... (էջ 95)։

Ծաղիկներին բարև տալու մեջ է հենց ամբողջ Թումանյանը. դա բարև է ոչ միայն ծաղիկներին, այլև ամբողջ աշխարհին, տիեզերքին, վերը հիշած աստղերին։ Դա գոյության պայծառ ընկալում է, ապագայի անհողդողդ հավատ, մարդու մեծարում։ Կյանքի այդ անվերապահ, պարզ ու միաժամանակ իմաստուն—դա է բնորոշ ժողովրդի համար—ընկալման մեջ է Թումանյանի աշխարհայեցության էությունը, այն կորիզը, որը անմահական ջրի հատկությունն ունի՝ կյանք տալու և աճեցնելու, բայց երբեք չխորտակելու։

Արդեն խոսվեց պատմության վարընթացի՝ հայ ժողովրդի օրավուր վատթարացող կացության ու դրա անդրադարձման մասին Թումանյանի ստեղծագործության մեջ։ Բայց պոետի սուր աչքը ոչ միայն դիտեց պատմության վարընթացը, այլև նրա վերընթացը։ Այս վերընթացն էր ռուսական հեղափոխությունը, 1905 և 1917 թվականները։ Ու եթե առաջինը, վարընթացը, վերաբերում էր հատկապես հայ ժողովրդին, ապա երկրորդը, վերընթացը, Հոկտեմբերը վերաբերում էր արդեն ամբողջ մարդկությանը, այդ թվում նաև հայ ժողովրդին։ Դա այն ուղին էր, որ բոլոր ժողովուրդներին տանում էր անհրա-

ժեշտության տիրապետությունից դեպի ազատության տիրապետությունը, որ փրկում էր նրանց ազգային, քաղաքական, սոցիալական ամեն տեսակ կապանքներից ու կաշկանդումից։

Հոկտեմբերյան հեղափոխության առաջին իսկ քայլերից Թումանյանը դիտակցեց նրա ժողովրդական բնույթը։ Բանաստեղծը զգաց իրեն հարազատ տարերքում։ Բայց ոչ միայն այդ։ Ազատ կարող ենք ասել, թե այն լույսը, որ ելնում էր Թումանյանի ամբողջ ստեղծագործությունից ու մասնավորապես վերջին շրջանի նրա լիրիկայից, այն աներեր, աննահանջ օպտիմիզմը, որ հատուկ էր նրան, Հոկտեմբերյան հեղափոխությամբ նոր ուժ ստացավ, կրկնապատկվեց, եռապատկվեց։

Թումանյանը կարծես կանխազգում էր մարդկությանը բարի հանդրվանի հասցնող այդ շրջադարձը։ Հեղափոխության ու քաղաքացիական պատերազմի թոհուբոհի մեջ նա տեսավ ապագա խաղաղ ու ստեղծարար կյանքի ցոլքը, մարդու, մարդկության վերջնական հաղթանակը։ Ստեղծվեցին այն պայմաններն ու մթնոլորտը, երբ բանաստեղծը կարող կլիներ ավարտելու մարդու վերածնությունը փայփայող «Հազարան բլբուլ» պոեմը, որովհետև այդ վերածնության ուղին այլևս առաջվա պես մշուշապատ չէր, այլ միանգամայն պարզ. դա հասարակական արմատական հեղաշրջման ուղին էր։ Այդ, ավաղ, չկատարվեց, որովհետև մարմնի տկարությունը ավելի ուժեղ հանդիսացավ, քան հոգու հոժար կամքը։ Այս խնդրում շատ ավելի երջանիկ էր Ավ. Իսահակյանը, որը ի վիճակի եղավ շարունակելու «Սասմա Մհերը»։

*

Կենսահաստատ, համարձակ աշխարհընկալման այն ծավալումն ու խորացումը, որը տեսանք Թումանյանի լիրիկայում, բնորոշ էր նրա ստեղծագործության համար ընդհանրապես։

Մեզ հայտնի է, որ իր պոեմներում, լեգենդներում և պատմվածքներում Թումանյանը երգել է գերազանցորեն հայ ժողովրդի ցավը։ Սակայն մորմոքելով այդ ցավից, նա քիչ դեպքերում է հասել հոռետեսության։ Ընդհակառակը, քանի ժամանակը գնում էր, այնքան «Շունն ու կատվի» գվարճությունը կամ կյանքը կերպարանափոխելու «Հին օրհնության» հրավերը ավելի ու ավելի էր արտահայտվում հենց նույն լեգենդներում ու պոեմներում։ «Հառաչանքը» (1890) արդեն համատարած ընդվզում է, «Մարդարեություն» բանաստեղծության տողերում (1902) ճնշվածի հոգու մեջ հուր է ձգվում, աղքատի բազկին՝ ուժ տրվում, «Սասունցի Դավիթը» (1902) հերոսության մեծարում է, «Չարի վերջը» (1908)՝ չարի վերջնական խորտակման հավատ, վերջապես, «Թագավորն ու չարչին» (1917)՝ ստրուկի ու տիրոջ, շահի ու գերու հասարակական դաժան ու ստորացուցիչ հակասությունների նշավակում։

Նույնը նկատելի է նաև հայրենասիրական մոտիվներ երգող ստեղծագործությունների մեջ։

«Գիշերը» (1895) և «Տրտմության սաղմոսներից» (1898) տխուր երգերին հաջորդում են «Մեր նախնիներին» (1902) ոտանավորը, ուր մեծարվում են «հայի փրկության» երգիչները, «Լուսավորիչի կանթեղը» լեգենդը (1902), ուր կասկածոտ սրտերը հակադրվում են «դեպի հայոց ապագան» անսասան հավատ ունեցողներին, «Հայոց լեռներում» բանաստեղծությունը (1902), ուր հայոց լեռներին տրված «դժար», «արնոտ» և «սուգի» էպիտետները ավարտ-

վում են «կանաչ» կենսավետ ածականով։ Հետագայում «Հայոց վշտի...» (1903) սև ծովին հաջորդում է «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունը, ուր, հայրենիքի ապագայի նկատմամբ տոգորված ավելի մեծ հավատով Հայաստանը նախ բնութագրվում է որպես զարկված ու զրկված, որբի ու ողբի հայրենիք, ապա ավարտվում նոր, հույսի ու լույսի, հզոր հայրենիքի գաղափարով։

Հայրենիք մեծարող այս բանաստեղծությունը գրված է 1915 թվականին, իսկ ամեն տեսակ կապանքներից ազատվելու կոչի սկիզբ հանդիսացող «Թագավորն ու չարչին» լեգենդը 1917 թվականին։ Այդ տարբերվերը շատ էլ հեռու չեն իրարից։

Այդպիսով , Թումանյանը բուռն թափով ու բոլոր գծերով (վերը ասածին կարելի է ավելացնել բանաստեղծի հեքիաթները և մանկական բանաստեղծությունները, որոնցից սկզբից ևեթ ցայտում էր զվարթություն ու ժողովրդական կենսուրախ հումոր) ընթանում էր դեպի աշխարհի պայծառ ընկալումը, որի ամենաբարձր արտահայտությունն է նրա լիրիկան, մասնավորապես քառյակները։ Մեծ բանաստեղծի ժողովրդայնությունը առավել խորացավ և ընդլայնվեց, հայ ժողովրդի մեծ ցավի երգին առընթեր երևաց օրավուր ուժեղացող նույն հայ ժողովրդի մեծ հոգու ու լայն սրտի, նրա իմաստուն կենսուրախության երգը, որի հստակ ջրերը ազատ և անարգել թափվեցին Հոկտեմբերի լայնածավալ, ազնիվ ալեկոծումով տոգորված ծովը։

ЧЕТВЕРОСТИШИЯ ОВ. ТУМАНЯНА

Х. С. САРКИСЯН

(Резюме)

Четверостишия Туманяна — высшее проявление его огромного поэтического дарования. В них нарсдность поэта выразилась в наиболее совершенных формах. Лирический герой Туманяна — это сам народ с его широким мировоззрением и глубокими чувствами. Экстатическое чувство единства с природой, миром, вселенной, оптимизм при ясном представлении всех невзгод жизни — вот что является характерным для мировосприятия Туманяна. Туманян преклоняется перед величием бытия, непрерывно сознавая себя если даже ничтожной, то, во всяком случае, органической частью его.

Познание сущности вселенной — вот та эмоционально-интеллектуальная атмосфера, в которой дышит Туманян, которой переполнены лучшие его творения. Считая себя лишь посредствующим звеном передачи духовного богатства народа, Туманян глубоко озабочен судьбами своего народа, убежденный в лучшем его будущем. Человека, подобно родившей его природе, Туманян считает великим творцом, автором великих свершений. Человек неизмеримо богат, на его челе печать величия вселенной, он — источник мудрости, он безгранично щедр от избытка душевной полноты. Туманян, как никто, ясно видел все превратности на пути раскрытия всех заложенных в человеке возможностей и все-таки верил в него, в народ, в будущее человечества.

С таким содержанием поэтического сознания вошел Туманян в стихию революции, сразу поняв ее гуманизм, народность, великое ее значение в истории человечества.

Раскрытие этих замечательных сторон творчества и мировоззрения Туманяна и является задачей данной статьи.